ՆԱԽԱԳԻԾ

Ռ Ա Զ Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԲԱԺԻՆ I
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022 թվականների ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) կազմված է երկու հիմնական բաժիններից:

2. Առաջին բաժինը ներառում է Ռազմավարության մշակման հիմնական նպատակը, երիտասարդական պետական քաղաքականության ներկայիս վիճակի վերլուծությունը և երիտասարդության վիճակի նկարագրությունը՝ հենված նախորդ հինգ տարիներին իրականացված բազմակողմանի վերլուծությունների հիմնական արդյունքների վրա:

3. Երկրորդ բաժնում ներկայացված են Ռազմավարության հիմնական գերակայությունները՝ ըստ երիտասարդների վեր հանած կարիքների և հիմնական ռազմավարական խնդիրների, իրականացնող կողմերի հակիրճ նկարագրությունը, ֆինանսավորման, մոնիտորինգի և գնահատման մեխանիզմները, հանրայնացման և հաղորդակցության պլանը:

4. Ռազմավարության երրորդ բաժնում ներկայացված է միջոցառումների ծրագիրը՝ ըստ համապատասխան գործողության, պատասխանատու և համագործակցող կառույցների, իրականացման ժամկետների և ֆինանսավորման աղբյուրների:

ԳԼՈՒԽ 2. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

5. Ռազմավարությունը մշակվել է՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի նիստի № 54 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի հիմնական դրույթների վրա: Երիտասարդների կարիքների վերլուծության և գերակայությունների սահմանման համար փաստական հենք են ընդունվել 2013-2017 թվականներին Երիտասարդական

ուսումնասիրությունների ինստիտուտի և այլ հասարակական ու միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտություններն ու զեկույցները:

6. Ռազմավարությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության՝ երիտասարդությանն առնչվող խնդիրների լուծմանը միտված գործունեության գերակա ուղղությունները՝ առաջարկելով առավել փաստարկված և իրատեսական լուծումներ:

7. Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականությունը պետության սոցիալական քաղաքականության կարևոր և անբաժանելի մասն է և ունի ռազմավարական նշանակություն:

8. Երիտասարդական պետական քաղաքականության նպատակը երիտասարդ մարդու ազգային դիմագծի, ժողովրդավարական, քաղաքացիական գիտակցության ձևավորման, երիտասարդ մարդու սոցիալական կայացման, նրա ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու սոցիալական, տնտեսական, իրավական, քաղաքական, կրթական, հոգևոր, մշակութային, կազմակերպական, մասնակցային պայմաններ և երաշխիքներ ստեղծելն է: Այն ուղղված է երիտասարդների անհատական, սոցիալական և կրթական աճին նպաստելուն, նրանց ներուժը զարգացնելուն և երիտասարդներին հասարակության մեջ լիարժեք հաստատվելուն օգնելուն:

9. Երիտասարդական պետական քաղաքականությունը մշակվում և իրականացվում է պետական կառավարման լիազոր մարմնի կողմից՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, երիտասարդական հասարակական կազմակերպությունների, երիտասարդական աշխատողների, երիտասարդների և այլ՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց մասնակցությամբ:

10. Սույն Ռազմավարության իմաստով անմիջական շահառուներն են Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգով սահմանված սուբյեկտները, մասնավորապես՝ 16-30 տարեկան քաղաքացիները, երիտասարդական հասարակական կազմակերպությունները, երիտասարդ ընտանիքները, երիտասարդական աշխատողները:

11. Ռազմավարությունը հիմնված է այն գիտակցության վրա, որ երիտասարդները (16-30 տարեկաններ), որոնց ընդհանուր թիվը, համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 2016 թվականին կազմել է 709.617 մարդ (ընդհանուր բնակչության շուրջ 27 %-ը), հասարակության կարևոր ներուժն են, և պետք է նրանց ազատ, բազմակողմանի զարգացած, առողջ և պատասխանատու քաղաքացիներ դառնալու հնարավորություն ընձեռել:

12. Ռազմավարության նպատակն է երիտասարդների հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և թվային մասնակցության խթանումը, երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակումը, երիտասարդական աշխատողի ինստիտուտի կայացումը և հետագա զարգացումը,

երիտասարդների ցկյանս կրթության խրախուսումը և մեխանիզմների մշակումը, երիտասարդների շրջանում հոգևոր-մշակութային և ընտանեկան արժեքների պահպանումն ու զարգացումը, միջազգային երիտասարդական համագործակցության, միջմշակութային երկխոսության և երիտասարդների շարժունության, երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանումը:

13. Ռազմավարության մեջ երիտասարդությունն անմիջական շահառու է և ծավալվող գործընթացներում իր ավանդը ներդնող կարևոր մասնակից:

ԳԼՈՒԽ 2. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

14. Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականությունը՝ որպես համակարգված քաղաքականություն, իրականացվում է 1995 թվականից:

15. 2007 թվականից Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն է (այսուհետ՝ Նախարարություն):

16. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի իրականացման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված է ֆինանսավորում՝ առանձին տողով:

17. Նշված ծրագրերը մշակվում են Նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության կողմից և իրականացվում են «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) միջոցով:

18. 2010 թվականից գործում է Հայաստանի երիտասարդական հիմնադրամը, որն ունի պետական ֆինանսավորում՝ Հայաստանի Հանրապետության մարզերում երիտասարդական միջոցառումներ իրականացնելու համար:

19. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի սեպտեմբերի 17-ի № 785-Ա որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհուրդ, որի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը, խթանել հանրային կյանքին երիտասարդների մասնակցությունը և նպաստել երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը: Խորհուրդը ձևավորվել է համակառավարման սկզբունքով՝ պետական և հասարակական հատվածների հավասար ներկայացուցչությամբ, ընդ որում, հասարակական հատվածը ներկայացնող անդամներն ընտրվել են մրցութային կարգով:

20. Համայնքներում երիտասարդական քաղաքականության իրականացմանն աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի

փետրվարի 10-ի № 85-Ա որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի օրինակելի կանոնադրություն, և ձևավորվել են համապատասխան խորհուրդներ Հայաստանի Հանրապետության 10 մարզերում:

21. Այսօր երիտասարդական քաղաքականության իրականացման գործում մեծ դեր են խաղում երիտասարդական հասարակական կազմակերպությունները: Երիտասարդական հասարակական կազմակերպությունների, մասնավորապես, մարզային հասարակական կազմակերպությունների գործունեությունն առավել ակտիվացել է վերջին երկու տարիներին՝ պայմանավորված Նախարարության որոշմամբ՝ երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի դրամաշնորհները ուղղել միայն մարզերում իրականացվող ծրագրերի ֆինանսավորմանը:

22. Մարզերի/կամ տարածքային համաչափ զարգացման խթանմանը և մարզային երիտասարդական կազմակերպությունների զարգացմանը էապես նպաստեց 2013 թվականին Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի մայիսի 23-ի № 121-Ա/1 հրամանի համաձայն իրականացվող «Տարվա երիտասարդական մայրաքաղաք» ծրագիրը:

23. Ոլորտի ներուժի զարգացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի № 56 արձանագրային որոշմամբ հաստատվել է երիտասարդական աշխատողի ինստիտուտի կանոնակարգը: Սույն փաստաթղթի հիման վրա Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի № 301-Ա/1 հրամանով հաստատվել է երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագիրը:

24. Պետական երիտասարդական քաղաքականությունն առավել փաստարկված դարձնելու նպատակով Նախարարության կողմից 2013 թվականին Միացյալ Ազգերի Կազմակերպության Զարգացման ծրագրի աջակցությամբ ՊՈԱԿ-ի կազմում հիմնադրվել է Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը: Նախորդ ռազմավարության իրականացման տարիներին ինստիտուտի կողմից պարբերաբար ուսումնասիրվել են երիտասարդական հիմնախնդիրները և պատրաստվել հետևյալ զեկույցները, որոնք էլ փաստական հիմք են ծառայում Ռազմավարության ձևավորման համար՝ «Հայաստանի Հանրապետության երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները» (2013 թ.), «Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. գործատու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները» (2014 թ.), «Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում» (2014 թ.), «Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերաբերյալ հետազոտություն» (2015 թ.), «Հայաստանի Հանրապետության

երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության մոնիթորինգ և գնահատում» (2016 թ.):

25. Փաստական հենք են հանդիսացել նաև այլ կազմակերպությունների հետևյալ զեկույցները՝ «Երիտասարդական աշխատանքը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ. երիտասարդական աշխատանքի միջազգային փորձի ուսումնասիրություն» (2015 թ.), Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն (2015 թ.), «Գյուղական համայնքների երիտասարդության իրավիճակի վերլուծություն զեկույց» (2015-2016 թթ.), «Անկախության սերունդ. հետազոտություն երիտասարդների շրջանում. Հայաստան, 2016 թ.»:

ԳԼՈՒԽ 3. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

26. Հայաստանի երիտասարդության վիճակը պետք է դիտարկել երիտասարդության հիմնախնդիրների լուծման հետևյալ ռազմավարական ուղղություններով՝

1) երիտասարդների հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և թվային մասնակցություն,

2) երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ,

3) երիտասարդական աշխատանքի կայացում և հետագա զարգացում, երիտասարդների ցկյանս կրթություն,

4) երիտասարդների հոգևոր-մշակութային և ընտանեկան արժեքներ, ռազմահայրենասիրական դաստիարակություն,

5) միջազգային երիտասարդական համագործակցություն, միջմշակութային երկխոսություն և երիտասարդների շարժունություն,

6) երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպ:

27. *Երիտասարդների հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և թվային մասնակցություն:* Տարբեր հետազոտություններում երիտասարդների մասնակցությանը անդրադարձ կատարվում է տարբեր բաղադրիչներով: Հայաստանում իրականացված հետազոտություններում անդրադարձ է կատարվում երիտասարդների մասնակցությանը ժողովրդավարության, զբաղվածության, կառավարման, մշակույթի համատեքստերում: «Անկախության սերունդ» հետազոտության տվյալները փաստում են, որ հայաստանյան երիտասարդները առավել հետաքրքրված են Հայաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններով՝ 77,1 %-ը (շատ է հետաքրքրված՝ 22.3%-ը, հետաքրքրված՝ 54,8%-ը): Ընտրելու իրավունք ունեցող հարցված երիտասարդների 70,9 %-ը, ընդ որում՝ նրանց կեսից ավելին՝ 51,4 %-ը, միշտ մասնակցել է ընտրություններին, երբեք չի մասնակցել 14,4 %-ը: Չնայած այն հանգամանքին, որ հարցվածների մեծամասնությունը միշտ կամ մեծամասամբ մասնակցում է քաղաքական ընտրություններին, այդուհանդերձ բավականին ցածր է երիտասարդների վստահությունը ընտրովի քաղաքական մարմինների նկատմամբ.



28. «Գյուղական համայնքների երիտասարդության իրավիճակի հետազոտությունում» շեշտվում է համայնքներում որոշումների ընդունման մակարդակում երիտասարդների մասնակցության ընդլայնման անհրաժեշտությունը, որի համար, բացի գիտելիքներից ու կարողություններից, անհրաժեշտ է նաև զարգացնել տեղական ինքնակառավարման մարմինների՝ որոշումների մասնակցային ընդունման մշակույթը և աշխատանքի թափանցիկությունը: Հետազոտության մեջ շեշտվում է գյուղական համայնքներում հասարակական կազմակերպությունների պակասի մասին: Իսկ ՔՀԿ-ների զարգացումը կարևոր նախապայման է հատկապես մարզերում:

29. Մասնակցության համար որպես միջոց կարևորվում է կամավորական աշխատանքը: «Անկախության սերունդ» հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդության փոքր հատվածն է ընդգրկված հասարակական/-կամավորական գործունեության մեջ՝ 16,9 %, իսկ ընդգրկվածների մի ստվար զանգվածի համար կամավորական աշխատանք իրականացնելու պատճառներն առավել ռացիոնալ բնույթ ունեն (ընդգծելով զբաղված լինելու, մասնագիտական գիտելիքներ կիրառելու, նոր ընկերներ ձեռք բերելու և հնարավոր գործատուների հետ հանդիպելու ցանկությունը) և հազվադեպ են պայմանավորված այլոց օգնելու մտադրությամբ:

30. «Հայաստանի Հանրապետության երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրների հետազոտության» տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության երիտասարդների 30 %-ը մասնակցել է հավելյալ դասընթացների՝ աշխատանքային հմտություններ ձեռք բերելու համար:

31. «Հայաստանի Հանրապետության պետական երիտասարդական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության մոնիթորինգի և գնահատման հետազոտության» շրջանակներում իրականացված ֆոկուս-խմբային քննարկումներում երիտասարդները մասնակցության համար կարևորում են մոտիվացիայի առկայությունը, որի համար նախապայման է իրենց հանդեպ ուշադրության առկայությունը: Գրեթե բոլոր մարզերում ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցները մասնակցության ոլորտում կարիքների թվում առավել հաճախ նշել

են երիտասարդների հանդեպ ուշադրության, կարևորման պակասի խնդիրը՝ մասամբ դրանով պայմանավորելով երիտասարդների պասիվ մասնակցությունը: Մարզաբնակ երիտասարդների համար այս խնդիրը առավել արդիական է:

32. Նշվում է նաև երիտասարդների ինքնաարտահայտման և ինքնակազմակերպման համար անհրաժեշտ միջավայրի բացակայությունը:

33. *Երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ:* «Հայաստանի Հանրապետության երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրների հետազոտության» համաձայն միևնույն հաստիքի համար մրցող միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող երիտասարդներից գործատուն նախընտրում է բարձրագույն կրթություն ստացածին: Աշխատանքի ընդունելիս գործատուների 24.6 %-ը հատկապես ուշադրություն է դարձնում գործնական հմտություններին, 23.9 %-ը՝ տեսական գիտելիքներին, 20.3 %-ը՝ աշխատանքային փորձին, 18.2 %-ը՝ աշխատանքի ընդունվողի ներուժին, 10.4 %-ը՝ աշխատանքի ընդունվողի մոտիվացիային:

34. Հարցված երիտասարդների՝ աշխատանք գտնելու վրա ամենաորոշիչ ազդեցություն թողնող գործոններից են ծանոթությունները և ունակությունները՝ համապատասխանաբար 13.2 %-ը:



35. Գյուղական վայրերում զբաղվածության խնդիրը հատկապես արդիական է, քանի որ բացի գյուղատնտեսությունից՝ երիտասարդները քիչ հնարավորություն ունեն այլ ոլորտներում ընդգրկվելու, մասնագիտական կրթական հաստատություններն էլ նրանց համար համեմատաբար ավելի անմատչելի են: Ֆոկուս-խմբային քննարկումնե-րի ընթացքում մատնանշած խնդիրներից են նաև աշխատաշուկայում սեռային (գենդե-րային) խտրականության առկայությունը, ծանոթի ու բարեկամի սկզբունքով աշխա-տանքի ընդունելու մոտեցումը, մրցակցության խոչընդոտները՝ պայմանավորված մենաշնորհների առկայությամբ, ինչպես նաև գործատուների անվստահությունը երիտասարդ աշխատուժի հանդեպ: Նշվում է նաև աշխատանքային փորձ ձեռք բերելու հարցում աջակցության անհրաժեշտության մասին:

36. Համաձայն հետազոտության՝ Հայաստանի Հանրապետության երիտասարդների միայն 28 %-ն է զբաղված: Հայաստանում ապրող երիտասարդների

28 %-ը տնտեսապես ոչ ակտիվ է, և նրանց մեջ մեծամասնություն են կազմում իգական սեռի ներկայացուցիչները:

37. Հետազոտության արդյունքներով՝ 16-20 տարիքային խմբում զբաղված են հարցվածների 1 6%ը, 21-25 խմբում՝ 33 % ը, իսկ 26-30 տարեկանների խմբում՝ 34 %-ը: Սա նշանակում է զբաղված երիտասարդների թվի ավելացում տարիքային աճին զուգահեռ: Զբաղված է երևանաբնակ երիտասարդների 32 %ը, իսկ մարզաբնակների՝ 26 %ը: Հաշվի է առնվել, որ մարզաբնակ զբաղված երիտասարդների մոտ 19 %-ը զբաղված է սեփական հողատարածքի մշակմամբ և որպես վարձատրություն կարող է ստանալ բնամթերք:

38. Գյուղատնտեսությանը հաջորդում է առևտրի ոլորտը, որում ներգրավված են հարցվածների 14 %-ը, 11 %-ը՝ պետական մարմիններում, 9 %-ը՝ կրթության, գիտության, 7 %-ը՝ առողջապահության, 7 %-ը՝ արվեստի, մշակույթի, սպորտի, 6 %-ը՝ ուժային կառույցներում, հնգական տոկոս ծառայությունների, շինարարության, սպասարկման, ֆինանսական ոլորտներում, հարցվածների միայն 3 %-ն է զբաղված տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Տնտեսապես ոչ ակտիվ երիտասարդների 46 %-ը գյուղաբնակ է, 18 %-ը երևանաբնակ, 36 %-ը՝ Հայաստանի Հանրապետության այլ քաղաքներից: Երիտասարդների 36.8 %-ը ծառայողական աշխատանքներում է ներգրավված, 16.7 %-ը՝ ինքնազբաղ է, 8.7 %-ը գրասենյակային աշխատողներ են, 6.5 %-ը հողագործներ և անասնապահներ են, 5.3 %-ը՝ որակավորված բանվորներ, նույնքան էլ միջին օղակի մենեջերներ և բաժնի պետեր, 4.3 %-ը չորակավորված բանվորներ են, 3.1 %-ը՝ անհատ ձեռներեցներ և 2.8 %-ը՝ բարձր օղակի մենեջերներ ու տնօրեններ: Դրամական և ոչ դրամական եկամուտ ունեցող երիտասարդների 66 %-ը վարձու աշխատող է, 29 %-ը ինքնազբաղված է և 4 %-ը՝ ձեռներեց: Աշխատանք ունեցող հարցված երիտասարդների աշխատանքի և մասնագիտության համապատասխանությունը հետևյալն է. 34 %-ինը լիովին չի համապատասխանում, 33 %-ինը լիովին համապատասխանում է, 14 %-ինը հիմնականում համապատասխանում է, 6 %-ինը չի համապատասխանում և 13 %-ը չունի մասնագիտություն:

39. Աշխատանք ունեցող երիտասարդների 20 %-ը չգրանցված, 80 %-ը գրանցված աշխատողներ են: Գործազուրկ երիտասարդների 28 %-ը արական, 72 %-ը իգական սեռի են: Երևանում գործազուրկ է երիտասարդների 19 %-ը, Շիրակում՝ 30 %-ը, Սյունիքում և Արագածոտնում՝ 27-ական տոկոս, Լոռիում՝ 21 %-ը, Արարատում՝ 20 %-ը, Գեղարքունիքում՝ 19 %-ը, Վայոց ձորում՝ 18 %-ը, Տավուշում՝ 17 %-ը, Արմավիրում՝ 15 %-ը, Կոտայքում՝ 12 %-ը:

40. Հարցված հաշմանդամություն ունեցող 370 երիտասարդների 20.5 %-ն ունի դրամական եկամուտ, 79.5 %-ը չունի, զբաղված է 21 %-ը, 20.4 %-ի համար աշխատանքի ընդունման հարցում հիմնական դժվարությունն է աշխատանքային փորձի բացակայությունը, 17.9 %-ի համար՝ խտրականությունը հաշմանդամություն ունեցող երիտասարդների նկատմամբ, 11.1%-ի դեպքում՝ աշխատելու ընդունակության նկատմամբ թերահավատություն է դրսևորվել, 8.6 %-ի հանդեպ՝ կանխակալ վերաբերմունք հաշմանդամություն ունեցող երիտասարդների նկատմամբ:

Հաշմանդամություն ունեցող երիտասարդներին աշխատաշուկայում ներգրավելու համար բացակայում են՝ համապատասխան աշխատատեղերը (28 %), տրանսպորտային համակարգի հարմարեցումը (17 %), պատրաստակամությունը գործատուների կողմից (15 %): Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի հարցման շրջանակում իրականացվել է նաև երիտասարդների անկախության համաթվի (ինդեքսի) չափում: Երիտասարդների անկախության ցուցանիշը ներառում է չորս հիմնական բաղադրիչներ՝ ֆինանսական, տնտեսական, մտավոր և կենցաղային անկախություն: Ֆինանսական անկախությունը ցույց է տալիս, թե որքանով է երիտասարդը կարողանում ֆինանսապես հոգալ ընտանիքում առաջին անհրաժեշտության ծախսերը:

41. Երիտասարդների զբաղվածության համար անհրաժեշտ գիտելիքի ու կարողությունների զարգացման թեմաների շարքում նշվում է հետևյալը՝

1) աշխատանք փնտրելու, ինքնակենսագրական կազմելու, աշխատանքային, հարցազրույցի հմտություններ,

2) հարկային դաշտի, վարկերի մասին տեղեկացվածություն,

3) ձեռնարկատիրական կարողությունների զարգացում,

4) աշխատանքային իրավունքների մասին տեղեկացվածություն:

42. Գործնական աջակցության ուղղությունների թվում նշվում են սկսնակ ձեռնարկությունների և հատկապես փոքր բիզնեսների աջակցությունը, վարկերի մատչելի տոկոսադրույքը, նպաստավոր հարկային քաղաքականությունը երիտասարդ գործարարների համար:

43. *Երիտասարդական աշխատանքի կայացում և հետագա զարգացում, երիտասարդների ցկյանս կրթություն:* Հայաստանում երիտասարդական աշխատանքում ներգրավված են հիմնականում չամուսնացած, քաղաքաբնակ, մասնագիտական կրթություն ստացող կամ ստացած երիտասարդներ, որոնց տարիքը չի գերազանցում 25-ը, իսկ երիտասարդական աշխատանքներին մասնակցում են ավելի շատ աղջիկները, քան տղաները:

44. «Երիտասարդական աշխատանքի և աշխատողի վերաբերյալ հետազոտություն. Ինստիտուտի ներկայիս վիճակը և կայացման հեռանկարները» ուսումնասիրության մասնակիցների կողմից երիտասարդական աշխատանքի տարբեր սահմանումներ են նշվել: Ընդհանրացնելով կարելի է ասել, որ *երիտասարդական աշխատանքը գործունեության մի ձև է, որի նպատակն է ներգրավել երիտասարդներին երիտասարդական հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՀԿ), խմբերի և երիտասարդության խնդիրներով զբաղվող այլ կազմակերպությունների և սուբյեկտների կողմից իրականացվող՝ երիտասարդության հիմնախնդիրների, նրանց կարիքների լուծմանն ուղղված աշխատանքներում՝ նպաստելու երիտասարդների անձնային, կրթական, մասնագիտական աճին և հասարակության սոցիալ-տնտեսական, մշակութային, կրոնական կամ քաղաքական կյանքում մասնակցությանը*:

45. Երիտասարդական աշխատանքի համատեքստում գործող հիմնական կառույցներն ու դերակատարներն են՝ քաղաքականություն մշակողները,

ֆինանսավորող մարմինները, երիտասարդական աշխատանքով զբաղվող կազմակերպությունները, կառույցները, երիտասարդական հասարակական կազմակերպությունները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, պետական կառույցներին կից գործող երիտասարդական հովանոց կազմակերպությունները, քաղաքական կուսակցություններին կից գործող երիտասարդական կառույցները, կրթական հաստատություններին կից գործող կառույցները, միավորումները, կրթական հաստատություններին կից գործող կառույցները, Հայ առաքելական եկեղեցուն և կրոնական կազմակերպություններին կից գործող կառույցները, երիտասարդական աշխատողներն ու երիտասարդությունը:

46. Երիտասարդական աշխատողին ներկայացվող անձնային և մասնագիտական որակների պահանջներից առանձնացվել են՝

Երիտասարդական աշխատողին ներկայացվող պահանջներ

Անձնային որակներ	Մասնագիտական որակներ
Հարգալից վերաբերմունք մյուսների նկատմամբ	Երիտասարդների հետ աշխատելու գիտելիք և փորձառություն, և այդ գիտելիքները ինպաստ ծրագրի իրականացման օգտագործելու հմտություններ
Հաղորդակցման, խմբում աշխատելու հմտություններ	Ձեռք բերված ակադեմիական և ոչ ակադեմիական գիտելիքները ի նպաստ երիտասարդական աշխատանքի կիրառելու հմտություն
Լավ լսելու ունակություն/ ակտիվ լսելու տեխնիկա	Ծրագրի մշակման հմտություններ
Համբերություն	ՏՀՏ կիրառման բազային հմտություններ
Ազնվություն	Ղեկավարման հմտություններ
Պատասխանատվության զգացում	Երիտասարդական քաղաքականության իմացություն/ փոփոխությունների հետևող
Մյուսների հանդեպ ոչ քննադատական մոտեցում	Ինքնագնահատման և մոնիթորինգի իրականացման հմտություններ
Նպատակասլացություն	Դասավանդման հմտություններ
Մարտահրավերներին դիմակայելու ունակություն/ ճգնաժամային իրավիճակներում կողմնորոշում	Առանձին ոլորտների իմացություն՝ ըստ այն ոլորտների, որոնցում ներգրավված են
Օգնելու, աջակցելու պատրաստակամություն	Ծրագրի քայլերի հաջորդականության պահպանում, ժամանակի կառավարման հմտություններ
Իրավիճակին ճիշտ արձագանքելու հմտություն, առկա խնդիրների տրամաբանական տարբերակման կարողություն	Բանակցություններ վարելու հմտություններ
Ճկունություն	
Հումորի զգացում	
Առաջնորդությանջիղ	

47. Խոսելով երիտասարդական աշխատողի մասին՝ հետազոտության մասնակիցները նշել են այն որակները, որոնք պետք է ունենա երիտասարդական աշխատողը, և գրեթե ոչ ոք չի նշել, որ երիտասարդական աշխատողն ունի պահանջվող որակները, ինչը խոսում է երիտասարդական աշխատողի ինստիտուտի չկայացածության մասին:

48. Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ երիտասարդական աշխատանքը ծավալվում է հետևյալ ձևաչափերով.

1) *կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացներ*՝ ուղղված երիտասարդների անձնական և մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացմանը,

2) հանդիպումների, միջոցառումների կազմակերպում,

3) տեղեկատվական գործունեություն՝ տեղեկատվական թերթիկների տարածում, տեղեկատվության և նյութերի տարածում համացանցում և զանգվածային լրատվամիջոցներում, խորհրդատվական գործունեություն, որը ենթադրում է աջակցություն երիտասարդներին իրենց խնդիրների լուծման ճանապարհին:

49. Ոլորտի ներկայացուցիչների կարծիքով՝ երիտասարդական աշխատանքը պետք է անշահախնդրորեն միտված լինի երիտասարդների՝ սեփական իրավունքների ուղղությամբ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, երիտասարդների զբաղվածության խնդրի լուծմանը, գաղափարի շուրջ երիտասարդների միավորմանն ու առաջնորդմանը, երիտասարդների կարիքների ու ներուժի ճիշտ գնահատմանն ու չկոռումպացված աշխատանքի ապահովմանը:

50. Որպես իրենց գործունեության իրականացման խոչընդոտ՝ համայնքում երիտասարդական աշխատանքի իրականացման մասնակիցները նշում էին թույլ կապը պետական մարմինների հետ, ինչի պատճառով իրենք չեն կարողանում օգտվել պետական/համայնքային ռեսուրսներից:

51. Երիտասարդական աշխատանքը՝ որպես գործունեության հիմնական տեսակ, ոլորտի ներկայացուցիչների կողմից վերագրվում է երիտասարդական ուղղվածությամբ դրամաշնորհային ծրագրեր իրականացնող երիտասարդական կազմակերպություններին, և նման գործունեություն որդեգրած կազմակերպություններն էլ հենց հաճախ իրականացնում են որոշակի ֆինանսավորում չպահանջող քայլեր՝ ուղղված երիտասարդների զարգացմանը:

52. Ոլորտի խնդիրներից է իրականացվող ծրագրերի շարունակականության բացակայությունը: Երիտասարդները կարծում են, որ համայնքում պատասխանատու անձի նշանակումը կարող է լուծել երիտասարդական աշխատանքի իրականացման ենթակառուցվածքի հասանելիության խնդիրը, ՀԿ-ներն առաջարկում են պետության կողմից ՀԿ-ներին ամենամյա դրամագլխի տրամադրում, ինչը կապահովի ՀԿ-ի նվազագույն ծախսերը և կընձեռի սեփական նախաձեռնությամբ շարունակական աշխատանքների իրականացման հնարավորություն: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ տարբեր երկրներում երիտասարդական աշխատանքներում մեծ դերակատարություն ունի կամավորությունը, Հայաստանում ինստիտուտի կայացումից հետո հատկանշական կլինի երիտասարդական աշխատողների երկու տեսակի առկայությունը՝ վճարվող մասնագետներ և կամավոր երիտասարդական աշխատողներ:

53. *Երիտասարդների հոգևոր-մշակութային և ընտանեկան արժեքներ, ռազմահայրենասիրական դաստիարակություն:* Հոգևոր-մշակութային արժեքների ձևավորումն ու պահպանումը երիտասարդները կարևորում են երիտասարդների ժամանցի համատեքստում, որը հատկապես գյուղական համայնքների երիտասարդների համար արդիական կարիք է: Այս ոլորտում կան հետևյալ կարիքները՝

54. *Մշակութային հաստատություններ և միջոցառումներ:* «Հայաստանի Հանրապետության պետական երիտասարդական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության մոնիթորինգի և գնահատման հետազոտության» շրջանակներում մարզային քննարկումների ընթացքում հաճախ նշվել է համապատաս-

խան կառույցների՝ մշակույթի տների, արվեստի դպրոցների, երաժշտական դպրոցների պակասի կամ բացակայության մասին: Խորհրդային ժամանակաշրջանից առկա մշակութային օջախները հիմնականում անմխիթար վիճակում են գտնվում, իսկ նոր կենտրոններ գրեթե չկան: Այս խնդիրը հատկապես զգալի է գյուղական համայնքներում: Մարզում հարցված փորձագետներից մեկը նշում է, որ բազմաթիվ լքված շենքեր կան, որոնք կարելի է օգտագործել, ստեղծել արվեստի կենտրոններ, խրախուսել նկարիչներին: Առանձին մարզերում երիտասարդները նշում են կինոթատրոնի, թատրոնների, արվեստի դպրոցների, կենտրոնների, գրադարանների բացակայության մասին, որն, ըստ իրենց, կարևոր բաց է մշակութային կյանքին մասնակցելու և մշակութային արժեքների ներարկման առումով: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները շեշտադրում են ազգային-մշակութային սովորույթների վերաբերյալ իրազեկման միջոցառումների անհրաժեշտությունը:

55. *Ժամանցի կազմակերպում:* Մշակութային կենտրոնների կարիքը փոխկապակցված է մշակութային միջոցառումների պակասի և ժամանցի կազմակերպման կարիքի հետ:

56. *Արժեքային համակարգ:* Հոգևոր-մշակութային ոլորտը, ըստ փորձագետների, շաղկապված է երիտասարդների ընդհանուր արժեքային համակարգի կայացման հետ: Երիտասարդների շրջանում արձանագրվում է անկախության, ազատագրման պահանջմունքը, գաղափարների արտահայտման կարիքը, որը միաժամանակ կարող է հակասության մեջ մտնել ծնողների և հասարակության կողմից ներարկված արժեքների հետ: Քննարկումների ընթացքում երիտասարդները որպես արտահայտման խոչընդոտ են նշել ավանդական մտածելակերպը, կարծրատիպերը, ընտանեկան գերխնամքը: Նրանք խնդրահարույց են համարում երիտասարդների անձնային զարգացմանն ու ինքնուրույն մտածելակերպին միտված ծրագրերի և հնարավորությունների պակասը: Հետազոտություններում նշվում է, որ անգամ անկախության քսանհինգ տարիներից հետո էլ շատ երիտասարդներ շարունակում են իրենց խնդիրների լուծման համար ապավինել արտաքին ուժերին՝ պետությանը, այլ կազմակերպություններին, ընտանիքին և բավականաչափ պատասխանատվություն չեն ստանձնում իրենց կյանքի ու համայնքի համար: Այս խնդիրներն անմիջականորեն առնչվում են մասնակցության ոլորտում նշված ինքնակազմակերպման, ինքնարտահայտման կարիքների հետ և անդրադառնում երիտասարդների մասնակցության մակարդակի վրա: Հոգևոր-մշակութային արժեքների ոլորտը կարևորվում է փորձագետների կողմից որպես մյուս ոլորտների համար անհրաժեշտ հիմք, որը չպետք է թերագնահատվի երիտասարդական ծրագրերի իրականացման ընթացքում:

57. «Անկախության սերունդ» հետազոտության համաձայն երիտասարդների 87,8 %-ն անվերապահորեն նշում է, որ իր կյանքի հիմնական նպատակը ծնողներին հպարտության առիթներ տալն է: Ծնողների հետ կապվածության և մտերմության, նրանց հանդեպ ունեցած վստահության բարձր աստիճանի մասին են վկայում նրանց հետ կամ նրանցից առանձին ապրելու վերաբերյալ հարցմամբ ձեռք բերված տվյալները:

Ո՞ւմ հետ եք ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ապրել վերջին մեկ տարվա ընթացքում:



58. Ծնողների հետ ապրելու հիմնական պատճառը, ըստ հարցվածների, այն է, որ այդպիսի լուծումն ինչպես սոցիալ-կենցաղային, այնպես էլ ֆինանսատնտեսական կամ այլ առումներով ամենաճիշտն է իրենց ընտանիքների համար: Այդ հանգամանքը հավանաբար պայմանավորված է ծնողների հետ ունեցած շատ լավ հարաբերություններով, ինչը նշում է երիտասարդների 72,4 %-ը, իսկ ծնողների հետ վիճելու կոնֆլիկտային հարաբերությունների մասին հիշատակել է միայն 2,7 %-ը: Երիտասարդների միայն 15,8 %-ն է ցանկանում հնարավորության դեպքում միայնակ ապրել: Այդ ցանկությունն առավել ընդգծվում է տարիքով ավելի մեծ հարցվածների շրջանում:

59. Ինչ վերաբերում է որոշումների ընդունման բուն գործընթացին, ապա հարցված երիտասարդների 61.7 %-ը որոշումներ կայացնում է ծնողների հետ համատեղ, ինքնուրույն է որոշում կայացնում 26,1 %-ը: Ինքնուրույն չէ հարցված երիտասարդների 12,2 %-ը, որոնց 9,3 %-ի դեպքերում մեկ ուրիշն է որոշում կայացնում իրենց փոխարեն, 2,9 %-ի պարագայում դա անում են ծնողները:

Ինչպե՞ս եք որոշում կայացնում Ձեզ համար կարևոր հարցերում:



60. Այս հարցում ևս կարևոր նշանակություն ունեն երիտասարդների սեռը, տարիքը, բնակավայրը և ամուսնական կարգավիճակը. ծնողները որոշում են կայացնում հատկապես չամուսնացած երիտասարդների փոխարեն, իսկ «մեկ ուրիշն է

իմ փոխարեն որոշումներ կայացնում» տարբերակը նշել են հիմնականում ամուսնացած իգական սեռի ներկայացուցիչները՝ ընդգծելով ամուսնու դերն այդ հարցում:

61. Ընդհանուր առմամբ նկատելի է հայաստանյան երիտասարդների կողմից ընտանիքի, մասնավորապես՝ ծնողների դերի ընդգծումը, որն արտահայտվում է նաև այնպիսի ճակատագրական որոշում կայացնելու հարցում, ինչպիսին է ամուսնական ընտրությունը: Ընտանիքի համաձայնությունը կարևորում է հարցվածների 80, %-ը:

62. Հետազոտությունը բացահայտել է ինչպես հայաստանյան ընտանիքի ավանդական գծերի պահպանում, այնպես էլ նրա արդիականացման որոշակի միտումներ՝ պայմանավորված հետխորհրդային Հայաստանում տեղի ունեցող/ած սոցիալ-տնտեսական գործընթացներով և բնակչության տեղաշարժերով:

63. Հայաստանյան հասարակության մեջ պահպանվել են երիտասարդների ավանդական ամուր կապերը ծնողների հետ: Դրանք բնորոշվում են զգացմունքային բարձր մակարդակով. երիտասարդների համար կյանքի հիմնանպատակներից է դիտարկվում ծնողներին հպարտացնելը: Երիտասարդների տնտեսական և բնակարանային խնդիրները ծնողներն են լուծում, ինչը համապատասխան կախվածություն է առաջացնում: Հետազոտության տվյալների ընդհանրացմամբ՝ կարելի է ընդգծել, որ երիտասարդները, անկախ իրենց ամուսնական կարգավիճակից, հիմնականում բնակվում են ավագ սերնդի ներկայացուցիչների (սեփական կամ ամուսնու ծնողների) հետ՝ չորսից վեց շնչից բաղկացած տնային տնտեսություններում: Քաղաքային ընտանիքներում առավել տարածված են երկու և գյուղական ընտանիքներում երեք սերնդից բաղկացած ընտանիքները:

64. Ծնողներից անկախանալու և առանձին բնակվելու ձգտումը աճում է տարիքի հետ, երբ երիտասարդները կարողանում են ինքնուրույն հոգալ իրենց կեցության ծախսերը: Հայաստանյան ընտանիքներում միջսերնդային կապերը առանձնանում են հայրիշխանական բնույթի փոխհարաբերություններով: Ընտանիքի հայրիշխանական կառուցվածքը հատկապես դրսևորվում է որոշումների կայացման գործընթացում, որտեղ ամենաազդեցիկ դերն ունի հայրը (ամուսնացած կանանց պարագայում՝ ամուսինը): Մյուս կողմից, ընտանեկան դերերի բաշխման կառուցվածքում ընդգծվում է երիտասարդների կողմից մոր դերը կարևորելը և կնոջ դերը չկարևորելը, ինչը բացատրվում է ընտանիքի ավանդական մոդելի շարունակական վերարտադրությամբ:

65. Հայաստանյան ընտանիքներում հստակ ընդգծված են սեռային մոտեցումները: Ընտանեկան հսկողությունն ու վերահսկողությունը առավելապես կիրառվում է աղջիկների, քան տղաների նկատմամբ: Անհատականության դրսևորումները երիտասարդների ընկալմամբ վերագրվում են տղամարդկանց, իսկ կանանց վերագրվում են առավելապես ամուսնա-ընտանեկան դերեր և պարտականություններ:

66. Իդեալական ընտանիքում, ըստ հայաստանյան երիտասարդների պատկերացումների, պետք է լինի 2-3 երեխա: Վերջին շրջանի հետազոտություններն ընդգծում են այն միտումը, որ ներկայիս երիտասարդությունը, ի տարբերություն ավագ սերնդի ներկայացուցիչների, նախընտրում է ավելի քիչ երեխա ունենալ:

67. Սեռային մոտեցումները դրսևորվում են նաև ապագա երեխայի սեռի նախապատվությունների հարցում: Երեք և ավելի երեխա ունենալ ցանկացողների մեծամասնությունը նախընտրում է ունենալ ավելի շատ տղա երեխա, քան աղջիկ: Տղա երեխաների նախապատվության հարցը շատ սուր է դրսևորվում հետխորհրդային հայաստանյան հասարակության մեջ. համաձայն ժողովրդագրական ցուցանիշների՝ Հայաստանի Հանրապետությունում մինչև 14 տարեկան երեխաների շրջանում տղաների թիվը գերազանցում է աղջիկների թվին, ինչը պայմանավորված է պտղի սեռով պայմանավորած հղիության ընդհատումներով, որոնց ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանում առաջատար դիրք է գրավում՝ համեմատվելով այդ խնդրի տեսանկյունից առավել խոցելի այնպիսի երկրների հետ, ինչպիսիք Չինաստանն ու Հնդկաստանն են: Ընդ որում, այս խնդիրը պայմանավորող գործոնների շարքում, համաձայն հետազոտության տվյալների, կենտրոնական են ոչ այնքան ամուսինների որոշումները, որքան շրջապատի ճնշումը:

68. *Միջազգային երիտասարդական համագործակցություն, միջմշակութային երկխոսություն և երիտասարդների շարժունություն:* Հետազոտություններից կարելի է վեր հանել շարժունակության հետ կապված հետևյալ խնդիրները՝ ավանդույթներ, որոնք կաշկանդում են երիտասարդներին և հատկապես երիտասարդ կանանց ճանապարհորդել, կրթության կամ աշխատելու նպատակով տեղափոխվել այլ բնակավայր, տեղեկացվածության պակաս առկա հնարավորությունների մասին, ինչպես նաև ֆինանսական միջոցների և օտար լեզվի չիմացության խնդիրներ:

69. Աշխարհագրական դիրքի պատճառով շատ գյուղական համայնքներ զրկված են մշակութային, մարզական ենթակառուցվածքներից, իսկ հանրային տրանսպորտը բացակայում է կամ սահմանափակ է, ինչը երիտասարդներին թույլ չի տալիս դուրս գալ համայնքի սահմաններից, տեղեկացված լինել, մասնակցել մշակութային, սպորտային, այլ երիտասարդական միջոցառումների, ինչպես նաև ներդրում ունենալ համայնքներում հասարակական գործունեության մեջ:

70. Համայնքային ճանապարհների ու տրանսպորտային խնդիրները հաճախ են նշվել մարզերի երիտասարդների կողմից՝ որպես առաջնային կարիք, քանի որ դրանց վատ վիճակը կամ բացակայությունը խոչընդոտում է իրենց մասնակցության, կրթության, զբաղվածության կարիքների բավարարմանը:

71. Հայաստանյան հետազոտություններում երիտասարդների միջմշակութային երկխոսության ուսումնասիրությունը կատարվել է տարբեր խմբերի հանդեպ հանդուրժողականության չափմամբ:

72. Երիտասարդների 78,9 %-ը ցանկանում է սոցիալական հեռավորություն պահպանել ադրբեջանցիների, իսկ 64,8 %-ը՝ թուրքերի նկատմամբ: Այլակրոն իրանցիների հարևանությունը անընդունելի է հարցվածների 27,7 %-ի համար: Այլազգի հնարավոր հարևանների նկատմամբ (ամերիկացիներ, ռուսներ, վրացիներ) անհանդուրժողականությունը ավելի ցածր մակարդակի է, քան, օրինակ, փախստականների ընտանիքների նկատմամբ դրսևորվող անհանդուրժողա–կանությունը. հարևանությամբ բնակվող փախստականներին վատ կվերաբերվի

երիտասարդ հարցվածների 12,5 %-ը: Երիտասարդները գրեթե ոչ մի խնդիր չունեն հատուկ կարիքներով մարդկանց, թոշակառուների և ուսանողների հետ հարևանություն անելու հարցում:



73. *Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպ:* Ըստ հետազոտությունների՝ երիտասարդության շրջանում կա տեղեկացվածության ու մոտիվացիայի պակաս՝ առողջությանը հետևելու, ժամանակին բժշկական հաստատություններ այցելելու, բուժզննում անցնելու համար:

74. Քննարկումների մասնակից երիտասարդները բազմիցս նշում են մարզվելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայության մասին, մասնավորապես՝ մարզային համայնքներում ու հատկապես գյուղերում, որտեղ չկան մարզադահլիճներ, մարզական կենտրոններ, մարզադաշտեր: Նշվում է նաև անվճար մարզասրահների, մարզասարքերով հագեցած բաց հանրային վայրերի պակասի մասին: Առանձին շեշտվում է հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար համապատասխան մարզական ծառայությունների, ենթակառուցվածքների պակասի մասին: Ֆոկուսխմբային քննարկումներից մեկում նշվել է, որ անգամ դպրոցներում ֆիզկուլտուրայի առարկան պատշաճ չի դասավանդվում:

75. Առանձին փորձագետներ և ֆոկուս խմբերի մասնակիցներ բարձրաձայնել են առողջապահական համակարգի բացերի մասին, որոնք անմիջականորեն կապված են երիտասարդների առողջ ապրելակերպի հետ: Մասնավորապես, նշվել է բժշկական ապահովագրության համակարգի բացակայության, բուժօգնության անմատչելիության, մարզերում որակյալ բուժաշխատողների պակասի, երեխաների ու երիտասարդների առողջության ստուգումների բացակայության մասին, որի հետևանքով ժամանակին միջամտություն չի կատարվում, և երիտասարդ սերնդի առողջությունը վտանգվում է:

ԲԱԺԻՆ II
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 4. ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿԱՐԻՔՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ)

76. Հիմք ընդունելով առկա փաստական հենքը, իրականացված կարիքների գնահատումները՝ Ռազմավարության գերակայություններ են սահմանվում՝

1) երիտասարդների հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և թվային մասնակցության մակարդակի բարձրացում,

2) երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակում,

3) երիտասարդական աշխատանքի կայացում և հետագա զարգացում, երիտասարդների ցկյանս կրթության խրախուսում,

4) երիտասարդների հոգևոր-մշակութային և ընտանեկան արժեքների պահպանում և զարգացում, ռազմահայրենասիրական դաստիարակություն,

5) միջազգային երիտասարդական համագործակցության, միջմշակութային երկխոսության և երիտասարդների շարժունության խրախուսում,

6) երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանում:

77. *Երիտասարդների հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և թվային մասնակցության մակարդակի բարձրացում:* Ստորև առանձնացված են երիտասարդների մասնակցային գործընթացների հետ կապված խնդիրները և կարիքները: Միևնույն ժամանակ տնտեսական ու մշակութային կյանքում երիտասարդության մասնակցության խնդիրները քննարկվում են երիտասարդների զբաղվածության ու մշակութային ոլորտների համատեքստում, որոնք կներկայացվեն հետագա բաժիններում:

78. *Մասնակցություն քաղաքական և քաղաքացիական կյանքում, որոշումների ընդունման գործընթացներում:* Երիտասարդների լայն շրջանում պետական կառավարման համակարգի, համայնքում որոշումների կայացմանը մասնակցության հնարավորությունների, մարդու իրավունքների վերաբերյալ տեղեկացվածության ու գիտելիքի պակաս կա: Այս բացը հնարավոր է լրացնել տեղեկատվական միջոցներով, սակայն միևնույն ժամանակ առավել արդյունավետ են համարվում հատուկ միջոցառումների, ակումբների ու ֆորումների կազմակերպումը, քանի որ դրանք հնարավորություն են տալիս նաև զարգացնելու երիտասարդների հաղորդակցման հմտությունները և ավելի արդյունավետ յուրացնելու տեղեկությունները:

79. Գյուղական համայնքների երիտասարդության՝ որոշումների ընդունման մակարդակում մասնակցության համար, բացի գիտելիքներից ու կարողություններից, անհրաժեշտ է նաև զարգացնել տեղական ինքնակառավարման մարմինների՝ որոշումների մասնակցային ընդունման մշակույթը և աշխատանքի թափանցիկությունը:

80. Ընդհանուր առմամբ, քաղաքացիական գիտակցության զարգացման կարիք է արձանագրվում, քանի որ առանց համապատասխան վերաբերմունքի, գիտակցության, թե՛ գիտելիքներ ստանալու մոտիվացիան, թե՛ հետագայում այդ գիտելիքների օգտագործումը իրական մասնակցային գործընթացներում քիչ հավանական են:

81. Փորձագետները նշում են, որ հաճախ երիտասարդները, կենտրոնանալով առօրյա ապրուստի խնդիրների վրա, չեն կարևորում համայնքային և կամ հասարակական կյանքում մասնակցության հարցերը: Ազատ ժամանակ ունենալու պարագայում երիտասարդները ժամանակը չեն ուղղում համայնքային խնդիրների լուծմանը, նաև գաղափարներ առաջարկելու և ի կատար ածելու կարողություններ և ցանկություն չունեն: Հասարակական կյանքի մասնակցության մոտիվացիայի պակասը մասամբ պայմանավորված է պետական կառույցների հանդեպ թերահավատությամբ և տեղեկատվության պակասով:

82. *Կամավորական աշխատանքի խթանում:* Հետազոտական զեկույցներում և փորձագիտական հարցազրույցներում կարևորվում է կամավորական աշխատանքը՝ որպես մասնակցության միջոց: Այս առումով անհրաժեշտություն կա քայլեր ձեռնարկել կամավորության գաղափարի ճանաչելիության/հանրայնացման մակարդակի բարձրացման, ընկալումների ու պատկերացումների փոփոխության ուղղությամբ: Երիտասարդության փոքր հատվածն է ընդգրկված հասարակական/կամավորական գործունեության մեջ, իսկ ընդգրկվածներից շատերի համար կամավորության պատճառները պայմանավորված են ժամանցի, սոցիալական շփման և աշխատանք գտնելու, այլ ոչ թե մյուսներին օգնելու նկատառումներով: Միևնույն ժամանակ, կամավորության գաղափարը ներկայումս ավելի լայն տարածում ունի, քան տարիներ առաջ՝ նաև շնորհիվ երիտասարդների մասնակցությանն ուղղված բազմաթիվ ծրագրերի: Փորձագետների կողմից կարևորվում է կամավորության գաղափարը կրթական համակարգում ներառելը, ինչպես արվում է առանձին մասնավոր դպրոցներում:

83. *Երիտասարդների ձայնի կարևորում և գնահատում:* Մասնակցության մոտիվացիայի համար, ըստ երիտասարդների, խոչընդոտ է նաև իրենց նկատմամբ համապատասխան ուշադրության բացակայությունը:

84. *Երիտասարդության ինքնարտահայտում և ինքնակազմակեր–պում:* Կարողությունների պակասով և երիտասարդների ներուժի հանդեպ թերահավատությամբ է պայմանավորված երիտասարդների ինքնարտահայտման և ինքնակազմակերպման խնդիրը, որը նշվում է առանձին հետազոտություններում և փորձագետների կողմից: Ինքնարտահայտման առումով մասնակցությանը խոչընդոտում է կաշկանդվածությունը, որը պայմանավորված է հասարակական վերաբերմունքով, ինչպես նաև նախկին փորձի բացակայությամբ: Այսինքն՝ կրթական համակարգում հարկավոր է խրախուսել երիտասարդների ազատ արտահայտումը, ընդունված կարծիքների վերաբերյալ հարցադրումները, քննադատական մոտեցումը, որոնք կնպաստեն երիտասարդների անկաշկանդ մասնակցությանը, մտքերի արտահայտմանն ու նոր նախաձեռնություններին: Ինքնարտահայտման ու

ինքնակազմակերպման կարողությունների զարգացմանը ներկայումս նպաստում են ոչ ֆորմալ կրթական ծրագրերը և համայնքային երիտասարդական խմբերի գործունեությանն աջակցող միջազգային ու տեղական կազմակերպությունները:

85. *Խոցելի խմբերի ներառում և մասնակցություն:* Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել առանձին խմբերի ներառմանը, քանի որ հաճախ տարբեր ծրագրերին ու միջոցառումներին նույն ակտիվ երիտասարդներն են մասնակցում, և խնդիր կա առավել խոցելի կամ պասսիվ երիտասարդներին ներգրավելու: Պետական աջակցությունը պետք է ուղղված լինի հատկապես ներառումից դուրս մնացած երիտասարդներին: Այս խմբերի ներառմանը խանգարում են կարծրատիպային պատկերացումները, առանձին թիրախավորված միջոցառումների պակասը, ինտեգրման խնդիրները:

86. *Երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներուժի զարգացում:* Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության մեջ հատուկ ուշադրություն է հատկացված մարզային հասարակության կազմակերպությունների զարգացմանը: Գյուղական համայնքներում նկատելի է հասարակական կազմակերպությունների պակաս և քաղաքային համայնքներում տեղակայված երիտասարդական կազմակերպությունների սահմանափակ գործունեություն գյուղական երիտասարդության խնդիրների լուծման և նրանց ներգրավման ուղղությամբ: Բացի հասարակական կազմակերպություններից՝ կարևորվում են նաև երիտասարդությանը միավորող ավելի լայն հարթակները: Թե՛ ուսումնասիրություններում, թե՛ փորձագիտական հարցազրույցներում ընդգծվում է ազգային, մարզային ու տեղական/համայնքային մակարդակով մասնակցության հարթակների պակասը. ազգային երիտասարդական խորհուրդները չեն գործում, մարզպետարանին կից երիտասարդական խորհուրդները սահմանափակ ներգրավում ունեն և պասսիվ են, իսկ ուսանողական խորհուրդները քաղաքականացված են, այսինքն՝ երիտասարդներին համախմբող և նրանց ձայնը որոշում ընդունողներին հասցնող հարթակները չկան կամ բավականաչափ արդյունավետ չեն:

87. *Թվային մասնակցություն, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործում:* Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառը մասնակցության, կրթության, զբաղվածության և ժամանցի ոլորտներին առնչվող մեկ այլ ոլորտ է, որը, որպես ուշադրության կարիք ունեցող զարգացման ուղղություն, նշվում է թե՛ հետազոտություններում, թե՛ փորձագետների կողմից: Սա զարգացող բնագավառ է և մեծ ներուժ ունի երիտասարդների մասնակցության հնարավորությունների ընձեռման տեսանկյունից, քանի որ քիչ ռեսուրս է պահանջում և մեծ հասանելիություն ապահովում: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը նաև կրթության և զբաղվածության կարևոր ուղղություն կարող է լինել:

88. Հետազոտություններում նշվում է նաև երիտասարդների՝ տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների, համացանցից օգտվելու մշակույթի պակասի մասին, քանի որ երիտասարդները ավելի շատ օգտվում են սոցիալական ցանցերից, սակայն չեն կարողանում լիարժեք օգտագործել համացանցի ընձեռած

տեղեկատվական ու զարգացման հնարավորությունները և հաճախ չգիտեն համացանցից անվտանգ օգտվելու կանոնները:

89. Այսպիսով՝ սույն գերակայության սահմաններում հիմնական ռազմավարական խնդիրներն են՝

- երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներուժի զարգացում,
- երիտասարդներին մոտիվացնելու գործուն մեխանիզմների մշակում,
- ծրագրային և ֆինանսական ռեսուրսների ապակենտրոնացում մայրաքաղաքից դեպի մարզեր՝ հատկապես գյուղական համայնքներ,
- մատչելի տեղեկատվության հասանելիության ապահովում,
- երիտասարդներին՝ մասնավորապես խոցելի խմբերի երիտասարդներին ներգրավելու համար արդյունավետ մեխանիզմների և ձևաչափերի մշակում,
- թվային մասնակցության հարթակների զարգացում, տեղեկատվական աղբյուրների հետ աշխատանքի գրագիտության մակարդակի բարձրացում:

90. *Երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակում:* Ռազմավարության մեջ ընդգրկված հաջորդ ուղղությունը երիտասարդների զբաղվածությունն ու սոցիալ-տնտեսական խնդիրներն են: Միևնույն ժամանակ թե՛ հարցազրույցների ընթացքում, թե՛ վերլուծությունների մեջ ընդգծվում է, որ զբաղվածության խնդիրները սերտորեն կապված են մասնագիտական կրթության հետ:

91. *Կրթության և աշխատաշուկայի կապը:* Առկա է կրթական համակարգի առաջարկի անհամապատասխանություն աշխատանքային շուկայի պահանջարկի հետ, որը, ըստ փորձագետների, պայմանավորված է երիտասարդների կողմից մասնագիտությունների ոչ ճիշտ ընտրությամբ, միջին մասնագիտական կրթության պակասով և կրթական ծրագրերի անհամապատասխանությամբ շուկայի պահանջներին: Երիտասարդների շրջանում առկա է բարձրագույն կրթություն ստանալու ձգտում՝ պայմանավորված նաև հասարակական ճնշմամբ, ինչպես նաև «նորաձև» լինելու նկատառումներով: Մյուս կողմից, կրթական համակարգն էլ համապատասխան առաջարկ չի ապահովում, քանի որ միջին մասնագիտական կրթության և կիրառական մասնագիտություններ տվող ուսումնական հաստատությունները քիչ են: Որպես լուծում, բացի կրթական համակարգի բարեփոխումներից և մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրումից/զարգացումից, արդյունավետ է զարգացնել արհեստագործության և այլ կիրառական մասնագիտությունների բնագավառում ոչ ֆորմալ կրթության հնարավորությունները:

92. Կրթական ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու համար պետք է խթանել բուհերի և կրթական կենտրոնների համագործակցությունը գործատուների հետ: Անհրաժեշտ է նաև ներառել կիրառական հմտությունների զարգացումը թե՛ մասնագիտական, թե՛ դպրոցական կրթության բնագավառում:

93. *Զբաղվածություն:* Կարելի է ասել, որ երիտասարդների զբաղվածության խնդիրը նախ և առաջ պայմանավորված է աշխատաշուկայի կարիքներին կրթական համակարգի անհամապատասխանությամբ: Այնուամենայնիվ, զբաղվածության ոլորտում առկա են այլ կարիքների ևս: Տեղեկատվական կարիքների շարքում նշվում է թափուր աշխատատեղերի մասին համալիր պետական տեղեկատվական բազայի բացակայության մասին: Նման բազան հնարավորություն կտար նաև ճիշտ կողմնորոշել երիտասարդներին մասնագիտության ու զբաղմունքի ընտրության հարցում:

94. Երիտասարդների զբաղվածության համար խոչընդոտ է աշխատանքային փորձի պահանջը գրեթե բոլոր գործատուների կողմից, ընդ որում՝ կամավորական աշխատանքը չի ընդունվում որպես աշխատանքային փորձ, քանի որ չկա համապատասխան օրենսդրական կարգավորում: Գյուղական վայրերում զբաղվածության խնդիրը հատկապես արդիական է, քանի որ բացի գյուղատնտեսությունից՝ երիտասարդները քիչ հնարավորություն ունեն այլ ոլորտներում ընդգրկվելու, մասնագիտական կրթական հաստատություններն էլ նրանց համար համեմատաբար ավելի անմատչելի են:

95. Երիտասարդների զբաղվածության համար անհրաժեշտ գիտելիքի ու կարողությունների զարգացման թեմաների շարքում նշվում է հետևյալը.

1) աշխատանք փնտրելու, ինքնակենսագրական կազմելու, աշխատանքային հարցազրույցի հմտություններ,
2) հարկային դաշտի, վարկերի մասին տեղեկացվածություն,
3) ձեռնարկատիրական կարողությունների զարգացում,
4) աշխատանքային իրավունքների մասին տեղեկացվածություն:

96. Գործնական աջակցության ուղղությունների թվում նշվում են սկսնակ ձեռնարկությունների և հատկապես փոքր բիզնեսների աջակցությունը, վարկերի մատչելի տոկոսադրույքը:

97. Սոցիալ-տնտեսական խնդիրներ: Թեև այս խնդիրը սերտորեն կապված է զբաղվածության հետ, այնոամենայնիվ, աշխատանք ունենալու դեպքում էլ աշխատավարձերի ցածր մակարդակի պատճառով սոցիալ-տնտեսական խնդիրները շարունակում են արդիական մնալ: Երիտասարդները արձանագրում են պետական աջակցության ծրագրերի մասին իրազեկման կարիք, ապրանքների, սննդի ու կյանքի ցածր որակի խնդիրներ:

98. Այսպիսով՝ երիտասարդների զբաղվածության և սոցիալ-տնտեսական վիճակի հետ կապված կարիքները արդիական են մնացել և դրանք հասցեագրելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև կրթության և մասնագիտական կողմնորոշման բաղադրիչներին:

99. Այսպիսով՝ սույն գերակայության սահմաններում հիմնական ռազմավարական խնդիրներն են՝

1) որակյալ և հասանելի ֆորմալ մասնագիտական կրթության ապահովում,
2) զբաղվածության ոլորտում խտրականության տարբեր դրսևորումների նվազեցում,

3) որակյալ մասնագիտական կողմնորոշմանը աջակցություն,

4) երիտասարդության համար (հատկապես համայնքային մակարդակում) կազմակերպվող միջոցառումների մասին տեղեկության ապահովում,

5) պահանջվող աշխատանքային փորձի ձեռքբերման աջակցություն,

6) կրթական համակարգի առաջարկի և աշխատաշուկայի պահանջարկի համապատասխանեցում,

7) Կարիերայի ճանապարհին ուղղորդում (փորձառության խնդիրներ):

100. *Երիտասարդական աշխատանքի կայացում և հետագա զարգացում, երիտասարդների ցկյանս կրթության խրախուսում:* Երիտասարդական աշխատողի ինստիտուտը ներդրման ընթացքում է, և այս ոլորտին են անդրադարձել այն փորձագետները, որոնք ընդգրկված են այս ինստիտուտի կայացման գործընթացներում:

101. Լինելով իրենց համայնքում երիտասարդական աշխատանք իրականացնողներ՝ որոշ դեպքերում երիտասարդները դժվարանում են խոսել իրենց՝ որպես երիտասարդական աշխատողի կարիքների մասին, քանի որ ընդհանուր առմամբ չեն պատկերացնում երիտասարդական աշխատանքի էությունը և երիտասարդական աշխատողի գործունեությունը: ՀԿ-ի դաշտը կարգավորման, փոխկապակցման, ներքին և արտաքին համագործակցության հաստատման, պետական շահերին ուղղված համակարգված աշխատանքի կարիք ունի, ինչը առանձին ՀԿ-ներին թույլ կտա իրենց ռազմավարական քաղաքականությունն իրականացնել՝ անկախ ստացած կարճաժամկետ դրամաշնորհային ծրագրի ավարտից ու չկրկնվելուց:

102. Կարիք կա հենց ոլորտի ներկայացուցիչների շրջանում տարածել երիտասարդական աշխատանքի էության, գործառնության մասին տեղեկատվություն: Անհրաժեշտ է տարածել երիտասարդական աշխատողի կերպարի բնութագիրը և շեշտադրել, թե որ դեպքերում անձը կարող է համարվել երիտասարդական աշխատող, որոնք են նրա հնարավորությունները և աշխատանքի ուղղվածությունը:

103. Ըստ փորձագետների՝ ոչ ֆորմալ կրթության ոլորտում վերջին տարիներին բավական շատ աշխատանք է իրականացվել, թեև այս ոլորտում էլ դեռևս չլուծված հարցեր են մնացել: Մասնավորապես, առաջարկվում է ներդնել ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչելիության համակարգ, որպեսզի գործատուների կողմից ոչ ֆորմալ կրթության միջոցով ստացած գիտելիքները և հմտությունները համարվեն նվազագույն պահանջներին համապատասխանող: Ընդգծվում է նաև ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական համակարգի փոխկապակցման կարիքը:

104. Այսպիսով՝ սույն գերակայության սահմաններում հիմնական ռազմավարական խնդիրներն են՝

1) երիտասարդական աշխատանքի և ցկյանս կրթության իրականացման համար անհրաժեշտ հայալեզու տեղեկատվության, ուղեցույցների և գրականության քանակի ավելացում:

2) երիտասարդական աշխատողների մասնագիտական ուսուցման (այդ թվում նաև նեղ մասնագիտական) իրականացում,

3) «երիտասարդական աշխատանք» և «երիտասարդական աշխատող» հասկացությունների հանրայնացում և ճանաչելիության բարձրացում,

4) երիտասարդների աշխատանքի տեսակների գործառույթների, գործիքակազմի, էթիկական նորմերի հստակեցում,

5) տեղական և միջազգային փորձի փոխանակման հարթակների ստեղծում և զարգացում:

105. *Երիտասարդների հոգևոր-մշակութային և ընտանեկան արժեքների պահպանում և զարգացում, ռազմահայրենասիրական դաստիարակություն:* Նախորդ ռազմավարության միջոցառումների ցանկում այս ոլորտում համեմատաբար քիչ միջոցառումներ էին ընդգրկված, որոնք հիմնականում անդրադառնում են հոգևոր ու հայրենասիրական դաստիարակությանը, հոգևոր-մշակութային արժեքների պահպանմանը, միջմշակութային երկխոսությանը: 2015-2025 թվականներին երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգում միջմշակութային երկխոսության ուղղությունն առանձնացված է հոգևոր-մշակութային արժեքների զարգացման ու ռազմահայրենասիրական դաստիարակության ոլորտից և ներառում է նաև միջազգային համագործակցությունը: Այս ոլորտներում առկա կարիքները քիչ են արտացոլված ուսումնասիրված հետազոտություններում. ըստ էության, մյուս կարիքների նկատմամբ դրանք երկրորդական տեղ են գրավում: Միաժամանակ, հոգևոր-մշակութային միջոցառումները կարևորվել են երիտասարդների ժամանցի համատեքստում, որը հատկապես գյուղական համայնքների երիտասարդների համար արդիական կարիք է:

106. *Մշակութային հաստատություններ և միջոցառումներ:* Մարզային քննարկումների ընթացքում հաճախ նշվել է համապատասխան կառույցների՝ մշակույթի տների, արվեստի դպրոցների, երաժշտական դպրոցների պակասի կամ բացակայության մասին: Խորհրդային ժամանակաշրջանից առկա մշակութային օջախները հիմնականում անմխիթար վիճակում են գտնվում, իսկ նոր կենտրոններ գրեթե չկան: Մարզերում հարցված փորձագետներից մեկը նշում է, որ բազմաթիվ լքված շենքեր կան, որոնք կարելի է օգտագործել, ստեղծել արվեստի կենտրոններ, խրախուսել նկարիչներին: Առանձին մարզերում երիտասարդները նշում են կինոթատրոնի, թատրոնների, արվեստի դպրոցների, կենտրոնների, գրադարանների բացակայության մասին, որը, ըստ իրենց, կարևոր բաց է մշակութային կյանքին մասնակցելու և մշակութային արժեքների ներարկման առումով: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները շեշտադրում են ազգային-մշակութային սովորույթների վերաբերյալ իրազեկման միջոցառումների անհրաժեշտությունը:

107. *Ժամանցի կազմակերպում:* Մշակութային կենտրոնների կարիքը փոխկապակցված է մշակութային միջոցառումների պակասի և ժամանցի կազմակերպման կարիքի հետ: Հետաքրքիր ու արդյունավետ ժամանցի կազմակերպումը հետազոտության մասնակից երիտասարդների կողմից առավել

հաճախ նշված կարիքներից է, որը կրթության և զբաղվածության խնդիրներից հետո առավել գերակա խնդիր է համարվել ֆոկուսխմբային քննարկումների մասնակիցների կողմից: Ժամանցի կազմակերպման անհրաժեշտության մասին են նշում նաև փորձագետները, որոնք հատկապես շեշտում են քննարկումների, ֆորումների կարիքը. դա կարող է լինել երիտասարդական ակումբի, համայնքային կենտրոնի կազմակերպման միջոցով: Ժամանցի ճիշտ կազմակերպումը երիտասարդների զբաղվածության ապահովման միջոց է, որը կարևոր նշանակություն ունի նաև արտագաղթի կանխման տեսանկյունից:

108. *Արժեքային համակարգ:* Հոգևոր-մշակութային ոլորտը շաղկապված է երիտասարդների ընդհանուր արժեքային համակարգի կայացման հետ: Որպես արտահայտման խոչընդոտ է նշվում ավանդական մտածելակերպը, կարծրատիպերը, ընտանեկան գերխնամքը: Հետազոտություններում նշվում է, որ անգամ անկախության քսանհինգ տարիներից հետո էլ շատ երիտասարդներ շարունակում են իրենց խնդիրների լուծման համար ապավինել արտաքին ուժերին՝ պետությանը, այլ կազմակերպություններին, ընտանիքին, և բավականաչափ պատասխանատվություն չեն ստանձնում իրենց կյանքի ու համայնքի համար: Այս խնդիրները անմիջականորեն առնչվում են մասնակցության ոլորտում նշված ինքնակազմակերպման, ինքնարտահայտման կարիքների հետ և անդրադառնում երիտասարդների մասնակցության մակարդակի վրա:

109. Հոգևոր-մշակութային արժեքների ոլորտը կարևորվում է փորձագետների կողմից որպես մյուս ոլորտների համար անհրաժեշտ հիմք, որը չպետք է թերագնահատվի երիտասարդական ծրագրերի իրականացման ընթացքում:

110. *Աջակցություն երիտասարդ ընտանիքներին:* Ընտանեկան կյանքին նախապատրաստելու անհրաժեշտությունը որպես երիտասարդների համար որպես կարևոր կարիք է նշվել առանձին հետազոտություններում և փորձագետների կողմից: Պատանի տարիքից սկսած՝ երիտասարդները պետք է պատրաստվեն ընտանիք կազմելուն, ստանան սեռական դաստիարակություն, հասկանան ծնողի դերը և դաստիարակության սկզբունքները: Այսօր Հայաստանում ծնողավարության հազվագյուտ դասընթացներ են իրականացվում, մինչդեռ ծնողավարության հիմունքներին ծանոթանալը կարող է հիմք դնել առողջ ընտանիքի ու առողջ սերնդի դաստիարակության համար: Այսպիսով, բացի բնակարանային խնդիրների հարցում երիտասարդ ընտանիքներին հատկացվող աջակցությունից, անհրաժեշտ է նախատեսել նաև ընտանեկան կյանքի վերաբերյալ համապատասխան կրթական միջոցառումներ վաղ տարիքում և խորհրդատվական ու տեղեկատվական աջակցություն նորաստեղծ ընտանիքներին երեխաների դաստիարակության հարցում:

111. *Ռազմահայրենասիրական դաստիարակություն:* Չնայած հայկական բանակի նկատմամբ երիտասարդների շատ բարձր վստահությանը՝ այնուամենայնիվ, նրանց մեծ մասի կարծիքով՝ բանակում առկա են որոշ խնդիրներ: Այս առումով Ռազմավարության մեջ կարևորվում են հոգևոր-դաստիարակչական ծրագրերի մշակումն ու իրականացումը, ինչպես նաև երիտասարդների շրջանում ազգային

արժեքների պահպանմանն ու հայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումների շարունակական իրականացումը: Ռազմահայրենասիրական դաստիարակությունը, որպես երիտասարդների հոգևոր-մշակութային արժեքների զարգացման և հայրենասիրական դաստիարակության առանձին ուղղություն, կիրականացվի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ սերտ համագործակցությամբ:

112. Այսպիսով՝ սույն գերակայության սահմաններում հիմնական ռազմավարական խնդիրներն են՝

1) տեղեկատվական, մշակութային և հոգևոր միջավայրի արժևորման և իրացման ուղիների ավելացում,

2) համաշխարհային, ազգային և լոկալ արժեհամակարգերում կողմնորոշման և դրանց հավասարակշռման հմտությունների ձևավորում,

3) հոր և մոր (տղամարդու և կնոջ) կերպարների և դրանց ընկալումների արդիականացում,

4) անձնային ազատության պատասխանատվության հավասարակշռության հիման վրա ստեղծված միջսերնդային համերաշխության հաստատում,

5) ազգային մշակույթի արժևորման, դրա դերի ճիշտ ընկալման և դրա լիարժեք կրողների խրախուսում:

113. *Միջազգային երիտասարդական համագործակցության, միջմշակութային երկխոսության և երիտասարդների շարժունության խրախուսում:* Հետազոտություններից կարելի է վեր հանել շարժունության հետ կապված հետևյալ խնդիրները՝ ավանդույթներ, որոնք կաշկանդում են երիտասարդներին և հատկապես երիտասարդ կանանց ճանապարհորդել, կրթության կամ աշխատելու նպատակով տեղափոխվել այլ բնակավայր, տեղեկացվածության պակաս առկա հնարավորությունների մասին, ինչպես նաև ֆինանսական միջոցների և լեզվի իմացության խնդիրներ: Աշխարհագրական դիրքի պատճառով շատ գյուղական համայնքներ զրկված են մշակութային, մարզական ենթակառուցվածքներից, իսկ հանրային տրանսպորտը բացակայում է կամ սահմանափակ է, ինչը երիտասարդներին թույլ չի տալիս դուրս գալ համայնքի սահմաններից, տեղեկացված լինել, մասնակցել մշակութային, մարզական, այլ երիտասարդական միջոցառումների, ինչպես նաև ներդրում ունենալ համայնքներում հասարակական գործունեության մեջ: Համայնքային ճանապարհների ու տրանսպորտային խնդիրները հաճախ են նշվել մարզային քննարկումների մասնակից երիտասարդների կողմից՝ որպես առաջնային կարիք, քանի որ դրանց վատ վիճակը կամ բացակայությունը խոչընդոտում է իրենց մասնակցության, կրթության, զբաղվածության կարիքների բավարարմանը:

114. Երիտասարդները հանդուրժողականության բարձր աստիճան են ցուցաբերում հայ հասարակության մեջ արտասահմանցիների ներկայության նկատմամբ: Միևնույն ժամանակ այնքան էլ բարձր չէ երիտասարդների հետաքրքրությունն այլ ազգերի մշակույթներով:

115. Այսպիսով՝ սույն գերակայության սահմաններում հիմնական ռազմավարական խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետությունում, Արցախում շարժունության, տեղեկատվության տարածման համապատասխան մեխանիզմների մշակում:

2) Գլոբալ, համապարփակ կրթության ներդրում կազմակերպություններում և դպրոցներում: Օտար լեզվի տիրապետման մակարդակի և հաղորդակցման ունակությունների զարգացում:

3) Մարզային-գյուղական երիտասարդների ներգրավվածության խթանում տեղական և միջազգային ծրագրերում:

4) Միջսահմանային երիտասարդական համագործակցության խթանման համար մեխանիզմների ներդրում. պետական աջակցություն միջսահմանային համագործակցության համար:

116. *Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանում:* Երիտասարդության վերաբերյալ հետազոտությունները և տվյալ հետազոտության մասնակիցները անդրադառնում են առողջության ու առողջ ապրելակերպի հետ կապված կարիքներին՝ այս ոլորտում մատնանշելով մի շարք կարիքներ և խնդիրներ:

117. *Առողջ ապրելակերպի մշակույթ:* Այս առումով, բացի տեղեկատվության ու գիտելիքի բարելավումից, կարևոր է նաև ընդհանուր վերաբերմունքի փոփոխությունը և համապատասխան մշակույթի ներարկումը, քանի որ հաճախ տեղեկատվություն չստանալու և բուժհաստատություններ այցելելու խնդիրը կապված է կարծրատիպերի հետ, մասնավորապես՝ վերարտադրողական առողջության բնագավառում:

118. Առողջ ապրելակերպի վերաբերյալ իրազեկման, համապատասխան մշակույթի ամրապնդման ուղղությամբ որպես անհրաժեշտություն է նշվում նաև զանգվածային մարզական միջոցառումների անցկացումը:

119. Մարզական ենթակառուցվածքներ: Երիտասարդները բազմիցս նշում են մարզվելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայության մասին, մասնավորապես՝ մարզային համայնքներում ու հատկապես գյուղերում, որտեղ չկան մարզադահլիճներ, մարզական կենտրոններ, մարզադաշտեր: Առկա է մարզասարքերով հագեցած բաց հանրային վայրերի պակաս: Առանձին շեշտվում է հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար համապատասխան մարզական ծառայությունների, ենթակառուցվածքների պակասի մասին:

120. Հաշվի առնելով, որ 2014 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել է առողջ ապրելակերպի խթանման ռազմավարությունը, որտեղ իրազեկման ու հանրային քարոզարշավների միջոցառումները հիմնականում արտացոլված են, Ռազմավարությամբ կարևորվում է մարզական ենթակառուցվածքների ստեղծումը և զարգացումը:

121. Թրաֆիկինգի և մարդկանց շահագործման ոլորտում միջոցառումները նախատեսված են 2016-2018 թվականների մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրով, որտեղ Նախարարությունն ունի իր դերակատարությունը երիտասարդների իրազեկման մասով:

122. Այսպիսով՝ սույն գերակայության սահմաններում հիմնական ռազմավարական խնդիրներն են՝

1) երիտասարդների, այդ թվում՝ սահմանափակ հնարավորություններով երիտասարդների շրջանում մարզական միջոցառումների կազմակերպում,

2) երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խթանում,

3) թրաֆիկինգի կանխարգելմանն ուղղված քարոզչական միջոցառումների կազմակերպում:

ԳԼՈՒԽ 5. ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿՈՂՄԵՐ

123. Ռազմավարության հիմնական պատասխանատուն և իրականացնողը Նախարարությունն է: Նախարարությունն իր ծրագրերը իրականացնում է ՊՈԱԿ-ի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի միջոցով:

124. Ռազմավարության միջոցառումների իրականացման կողմեր են նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը և այլ նախարարություններ:

125. Ռազմավարության իրականացման գործընթացում Նախարարությունը սերտորեն համագործակցում է երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ՝ որոշ ծրագրեր դրամաշնորհների միջոցով պատվիրակելով Նախարարության առցանց դրամաշնորհային համակարգում գրանցված 500 երիտասարդական հասարակական կազմակերպությունների:

126. Նախարարությունը Ռազմավարության գերակայությունների շրջանակներում համագործակցում է նաև միջազգային կազմակերպությունների հետ, այդ թվում՝

ԳԼՈՒԽ 6. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

127. Պետական երիտասարդական քաղաքականության շրջանակներում իրականացվող ծրագրերը ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին՝ միջազգային դոնորների, մասնավոր ներդրումների ներգրավմամբ: 2017 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից երիտասարդական ոլորտի ֆինանսավորումը կազմել է 827 152 հազար ՀՀ դրամ, որի հիմնական շահառուները եղել են Հայաստանի Հանրապետության ֆինանսների, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի և Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունները:

128. Միջազգային կազմակերպությունների և մասնավոր ներդրողների կողմից ստացված ֆինանսավորման չափերի մասին համապարփակ տեղեկատվությունը բացակայում է:

129. Նախարարությունը ծրագրերի իրականացման համար ֆինանսավորումը ուղղում է ՊՈԱԿ-ին, Հայաստանի երիտասարդական հիմնադրամին և տարեկան շուրջ 40 հասարակական կազմակերպությունների առցանց դրամաշնորհային համակարգի

միջոցով տրամադրում է դրամաշնորհներ՝ Ռազմավարության շրջանակներում սեփական նախաձեռնությամբ ծրագրերի իրականացման համար:

130. Ֆինանսավորվող կառույցները հաշվետու են Նախարարությանը ծրագրերի ֆինանսական ծախսերի և իրականացված ծրագրերի բովանդակային մասերով:

ԳԼՈՒԽ 7. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԳԼՈՒԽ 8. ՀԱՆՐԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

131. Ռազմավարության և միջոցառումների ծրագրի հանրայնացման, տեսանելիության բարձրացման համար Նախարարությունը օգտագործում է հետևյալ ռեսուրսները.

1) «երիտասարդ» երիտասարդական պորտալը (eritasard.am)

2) էլեկտրոնային այլ լրատվամիջոցներ (հեռուստատեսություն, համացանցային հարթակներ),

3) մարզային հանդիպումներ, տեղեկատվական ֆորումներ, աշխատանքային հանդիպումներ:

132. Ռազմավարության և միջոցառումների ծրագրի հանրայնացման, տեսանելիության բարձրացման հիմնական թիրախ խմբերն են՝

1) երիտասարդության ոլորտում աշխատող հասարակական կազմակերպություններ,

2) միջազգային կառույցներ, այդ կառույցների հայաստանյան ներկայացուցչություններ,

3) հնարավոր համագործակիցներ, գործընկերներ (երիտասարդական աշխատողներ, հետազոտողներ, փորձագետներ),

4) երիտասարդներ՝ գյուղական, քաղաքային համայնքների և մայրաքաղաքի,

5) երիտասարդական ոլորտով հետաքրքված քաղաքացիներ: